

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անվանումը՝	Մրցույթ Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրով
Ֆին. հնարավոր. No.	DemCom-FY20-01
Դիմելու վերջնաժամկետ՝	13-ը փետրվարի, 2020թ.
CFDA No.	19.900
Ընդհանուր հատկացվող գումար՝	շուրջ 400.000 ԱՄՆ դոլար՝ միջոցների առկայության պայմանով

Ա. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՄՆ պետքարտուղարությունը ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության միջոցով հայտարարում է բաց մրցույթ. ընդունվում են Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանմանը և քաղաքացիական կրթությանը/դաստիարակությանը միտված ծրագրային հայտեր: Հայտը պատրաստելիս խնդրում ենք խստիվ հետևել ստորև ներկայացվող բոլոր հրահանգներին:

Ծրագրի խնդիրները.

ԱՄՆ դեսպանությունը հայտարարում է Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի 2020թ. 1-ին մրցութային փուլի մեկնարկի մասին: Ընդունվում են Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանմանը և քաղաքացիական կրթությանը/դաստիարակությանը միտված նախաձեռնություններին վերաբերող հայտեր:

Հատուկ ուշադրության կարժանանան այն նախագծերը, որոնք միտված են ստորև նշված մեկ և ավելի ուղղությունների.

- կառավարման թափանցիկություն և հաշվետվողականություն, կոռուպցիայի դեմ պայքար,
- անկախ, բազմազան և բազմակարծիք լրատվական տիրույթի ձևավորում Հայաստանում,
- ձեռնարկատիրության կարևորության խթանում և ձեռնարկատիրական հմտությունների զարգացում,
- Հայաստանի և Ադրբեջանի և/կամ Հայաստանի և Թուրքիայի ժողովուրդների հաշտեցմանն ու նրանց միջև տևական գործակցությանն ուղղված ջանքերի խթանում, որը նաև կներառի պլաններ առաջարկվող նախագծի իրականացումից հետո համագործակցությունը շարունակելու վերաբերյալ,
- քաղաքացիական մասնակցության, քաղաքական բանավեճի և սոցիալական պատասխանատվության զարգացման հարցում երիտասարդների ներգրավմանն ուղղված ջանքերի խթանում:

Ներկայացվող նախագծերը պետք է պարզաբանեն, թե առաջարկվող գործողությունները ինչպես են ազդելու Հայաստանի ժողովրդավարական զարգացման վրա և ինչպես են նպաստելու կազմակերպության առաջ դրված հեռանկարային նպատակների իրացմանը: Առաջարկները պետք է անդրադարձ կատարեն կոնկրետ խնդիրներին և ակնկալվող արդյունքներին: Ուսուցման և կարողությունների զարգացման ուղղվածություն ունեցող առաջարկները հիմնականում քննության չեն առնվի, եթե չեն հստակեցվում կոնկրետ, չափելի արդյունքներ, որոնք կապահովվեն ուսուցման արդյունքում: Գործընկեր ՀԿ-ների կողմից համատեղ առաջարկների ներկայացումը խրախուսվում է:

Մասնակիցներ և թիրախ

Հստակեցրեք Ձեր նախագծի թիրախային մասնակիցներին՝ նշելով ծրագրային աշխատանքների ուղղակի ու անուղղակի շահառու հանդիսացող անձանց մասին ժողովրդագրական տվյալներ և մոտավոր քանակություն:

Բ. ԴԱՇՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարման ժամկետը/տևողությունը՝ 3-ից 12 ամիս

Ֆինանսավորվելիք նախագծերի քանակը՝ առավելագույնը 20՝ կախված նախագծերի բյուջեից
Տրամադրվող գումարի չափը՝ նվազագույնը 5.000, առավելագույնը 50.000 ԱՄՆ դոլար
Ընդհանուր ֆինանսավորման չափը՝ 400.000 ԱՄՆ դոլար՝ միջոցների առկայության պայմանով
Ֆինանսավորման տիպ՝ FY19/20 Աջակցություն Եվրոպային, Եվրասիային և Կենտրոնական Ասիային Ազատության աջակցման օրենքի ներքո
Ծրագիրը սկսելու պլանավորվող ամսաթիվ՝ 1 հուլիսի, 2020թ.

Այս ֆինանսական հնարավորությունը իրացվում է միջոցների առկայության պայմանով:

Ֆինանսավորման գործիքի տեսակը

Ընտրված նախագծերի ֆինանսավորման գործիքի տեսակը, ֆինանսավորման ստույգ չափը, աշխատանքների նկարագիրը, պայմաններն ու ժամկետները բանակցային հիմունքներով ենթակա են վերջնական համաձայնեցման ԱՄՆ դեսպանության ներկայացուցիչների և ընտրված առաջարկը ներկայացրած կազմակերպության միջև:

Ֆինանսավորումը կապահովվի կա՛մ դրամաշնորհի, կա՛մ համագործակցության պայմանագրի ներքո: Համագործակցության պայմանագիրը կկիրառվի այն դեպքերում, երբ նախագծում նախատեսվում է Միացյալ Նահանգների դեսպանատան զգալի ներգրավվածություն: «Զգալի ներգրավվածությունը» ենթադրում է, որ նախագծին ֆինանսավորում հատկացնելուց հետո ԱՄՆ դեսպանատունը աջակցելու, ուղղորդելու, համակարգելու է նախագծային աշխատանքները կամ մասնակցելու է դրանց՝ որպես գործընկեր: ԱՄՆ դեսպանատունը ՉԻ ստանձնի առաջնային պատասխանատվություն կամ նախագծի տնօրինման հետ կապված գործառույթներ և աշխատանքներում ՉԻ ունենա գերակա դերակատարում: Նախագծի հետ կապված այդ հարցերը վերապահված են շահառուին:

Առաջարկվող նախագծերի տևողությունը` Առաջարկվող նախագծերը պետք է ավարտվեն նախագծի մեկնարկման օրվանից հետո 12 ամսվա ընթացքում: Պետքարտուղարությունը միջոցների առկայության դեպքում այս նախագծերի գոհացուցիչ առաջընթացի պարագայում ֆինանսավորման նախնական շրջանից հետո պատրաստ է քննության առնել հետագա ֆինանսավորման տրամադրումը՝ ոչ մրցութային հիմունքներով, եթե հետագա ֆինանսավորումը բխում է ԱՄՆ պետքարտուղարության լավագույն շահերից:

Գ. ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

1. Հայտերի ներկայացման իրավասություն

Հայտ կարող են ներկայացնել հետևյալ կազմակերպությունները՝

- Շահույթ չհետապնդող կազմակերպություններ Հայաստանից, այդ թվում՝ հետազոտական կենտրոններ և քաղաքացիական հասարակության կամ հասարակական կազմակերպություններ
- Հայաստանում գրանցված անկախ լրատվամիջոցներ:

2. Համաֆինանսավորում

Համաֆինանսավորումը ողջունելի է, բայց պարտադիր պայման չէ: Չկա նաև հատկացվող միջոցների կրկնապատկման պահանջ:

3. Այլ պահանջներ

Ֆինանսավորում ստանալու համար բոլոր կազմակերպությունները պետք է ունենան նույնականացման եզակի ցուցիչ՝ Data Universal Numbering System/DUNS համարանիշ տրված Dun & Bradstreet-ի կողմից, ինչպես նաև պետք է ունենան գործող հաշվառում www.SAM.gov համակարգում: Այս հաշվառումների կատարման մանրամասները տես՝ Դ.3 կետում:

Դ. ՀԱՅՏ ԵՒ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Հայտերը պետք է լրացվեն անգլերենով և ներկայացվեն մինչև 2020թ. փետրվարի 13-ը Երևանի ժամանակով 18:00-ից ոչ ուշ: Հայտը լրացնելու համար անցեք հետևյալ հղմամբ՝ <https://www.usa.am/forms/site/view?id=7e290c252fe673893e9b9286ea66571e>

Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը քննության չեն առնվի: Հայտը էլեկտրոնային եղանակով ներկայացնելուց հետո առցանց պորտալում հայտնվում է հայտի ներկայացման մասին հաստատում:

2. Հավելվածներ.

- 1 էջանոց կենսագրական՝ նախագծի հիմնական անձնակազմի անդամներից յուրաքանչյուրի համար.
- Նախագծին աջակցելու մասին նամակներ ծրագրային գործընկերներից, որոնցով հստակեցվում է գործընկերներից յուրաքանչյուրի դերն ու պատասխանատվությունը.
- Եթե ձեր կազմակերպությունն ունի NICRA համաձայնագիր և ներառում է NICRA ծախսերը բյուջեում, ապա կցել վերջին NICRA-ն՝ PDF ֆայլով.
- Գրանցման պաշտոնական փաստաթղթեր.
- Ամբողջական հայտի համար՝ հայտադիմումի ստանդարտ փաթեթ կազմված SF-424, SF-424A, ստանդարտ ձևերից, որոնք կարող եք գտնել <http://www.grants.gov> կայքում:

3. Հայտի բովանդակությունն ու ձևը

Սահմանված վերջնաժամկետից՝ 2020թ. փետրվարի 13-ից հետո ստացված հայտերը քննության չեն առնվի: Ֆինանսավորման համար չեն դիտարկվի այն հայտերը, որոնցում բացակայում է պարտադիր տարրերից որևէ մեկը կամ որոնք պատրաստված չեն սույն հայտարարությամբ ներկայացված հրահանգներին համապատասխան:

Ստորև ներկայացվում են պարտադիր ձևերի լրացման հետ կապված որոշ պարզաբանումներ.

- Application for Federal Assistance (Դաշնային աջակցության հայտ) ստանդարտ ձև SF-424
 - Կետ 18a – g (նախատեսվող ֆինանսավորում, ԱՄՆ դոլարով). Այս կետերում պետք է արտացոլվի ընդհանուր ֆինանսավորման չափը, որ ցանկանում եք ստանալ դաշնային աջակցության տեսքով, (2) ձեր կողմից նախագծին ուղղվող միջոցները, եթե համաֆինանսավորումը գործոն է համարվում և (3) ընդհանուր նախագծի արժեքը, որն հավասար է հայտով պահանջված ու ձեր կողմից ներդրվող միջոցների գումարին, եթե կա համաֆինանսավորում:
 - Կետ 21(Լիազոր ներկայացուցիչ). ստորագրությունները (էլեկտրոնային կամ թանաքով) պետք է համապատասխանեն ձև SF-424 ձևի 21-րդ կետում տպագրված անուն-ազգանվանը: Որևէ այլ լիազոր ներկայացուցիչ չի կարող ունենալ 21-րդ կետում նշված անձի անունից ստորագրելու լիազորություն:
- Բյուջեի մասին տեղեկություններ. ոչ-շինարարական ծրագրեր, ստանդարտ ձև SF-424A. Ֆինանսավորման համար առանձին ներկայացրեք բյուջեին առնչվող SF-424A ձևը. B մասում ներկայացրեք բյուջեի բաշխումն ըստ տողերի, այսինքն՝ ըստ ծախսային կատեգորիաների. առանձին սյունյակներով տարանջատեք դաշնային ֆինանսավորումն ու ձեր համաֆինանսավորումը, եթե դա կա:
- SF-424B, երաշխիքներ, ոչ-շինարարական աշխատանքներ
Սա պետք է լրացվի ոչ-շինարարական բոլոր հայտերի համար:

4. Ֆինանսական կառավարման և շնորհառու կազմակերպությունների նույնականացման համակարգ (SAM.gov)

Պահանջվող գրանցումներ/հաշվառումներ

Ցանկացած կազմակերպություն, որն ընդգրկված է Ֆինանսական կառավարման համակարգի (SAM) Բացառված կողմերի ցուցակում (EPLS), իրավասու չէ հայտ ներկայացնել աջակցության միջոցների հաշվին որևէ ֆինանսավորման համար, հիմք՝ OMB ուղեցույց 2 CFR 180, որով ապահովվում է նախագահական 12549 (3 CFR, 1986 Comp., p. 189) 12689 (3 CFR, 1989 Comp., p. 235) հրամանագրերի բացառման ու կասեցման պահանջների իրականացումը: Բացի այդ, EPLS ցուցակում ընդգրկված որևէ կազմակերպություն չի կարող որևէ կերպ մասնակցել այս միջոցներով ֆինանսավորվող նախագծի որևէ միջոցառման կամ աշխատանքի: Հայտ ներկայացնելիս, խնդրում ենք SAM համակարգի EPLS ցուցակով ճշտել և համոզվել, որ ոչ իրավասու կազմակերպություններ ներգրավված չեն:

Դրամաշնորհի համար դիմող ցանկացած կազմակերպություն պետք է պարտադիր ունենա հետևյալ հաշվառումները.

- Նույնականացման եզակի ցուցիչ Dun & Bradstreet-ից կամ DUNS համարանիշ
- NCAGE/CAGE կոդ
- www.SAM.gov գրանցում

Հաշվառումն այս հարթակներում անվճար է:

Քայլ 1. Դիմեք DUNS և NCAGE համարանիշների համար (կարելի է անել միաժամանակ)

DUNS դիմում. Կազմակերպությունները պետք է ունենան Տվյալների համընդհանուր հաշվառման համակարգի (DUNS) համարանիշ Dun & Bradstreet-ից: Եթե ձեր կազմակերպությունը դեռ չունի այդ համարանիշը, ապա այն կարող եք ստանալ՝ զանգելով 1-866-705-5711 հեռախոսահամարով կամ այցելելով <http://fedgov.dnb.com/webform> էջը:

Քայլ 2. NCAGE դիմում.

Դիմումի էջը տես՝ <https://eportal.nspa.nato.int/AC135Public/scage/CageList.aspx>

Դիմելու գործընթացի մասին հրահանգները տես՝

<https://eportal.nspa.nato.int/AC135Public/Docs/US%20Instructions%20for%20NSPA%20NCAGE.pdf>

NCAGE հետ կապված հարցերի դեպքում զանգել 1-888-227-2423 հեռախոսահամարով, եթե գտնվում եք ԱՄՆ-ում կամ 1-269-961-7766 հեռախոսահամարով, եթե գտնվում եք ԱՄՆ-ից դուրս: NCAGE կոդի ստացման հետ կապված խնդիրներով կարող եք գրել NCAGE@dliis.dla.mil հասցեով:

Քայլ 3. NCAGE կոդի ստացումից հետո արդեն կարող եք գրանցվել SAM համակարգում մուտք գործելով <https://www.sam.gov> էջը: SAM գրանցումն ամեն տարի թարմացվում է:

Գրանցումը/հաշվառումն անվճար է: Այս բոլոր գրանցումները/հաշվառումները պետք է կատարված լինեն նախքան նախագծի ֆինանսավորման հայտի ներկայացումը: Քանի որ

գրանցումը/հաշվառումը կարող է տևել 3 օրից մինչև 4 շաբաթ և ավել, ուստի այս գործընթացը սկսեք հնարավորինս շուտ:

5. Ֆինանսավորման սահմանափակումներ

Այս ծրագրի ներքո ՉԵՆ ԿԱՐՈՂ ֆինանսավորվել կուսակցական քաղաքական գործունեությունը, մարդասիրական օգնությունը և բարեգործական աշխատանքները, գիտահետազոտական աշխատանքները, դրամահավաք արշավները, կոմերցիոն նախագծերը, առևտրային աշխատանքները, համաժողովներն ու օտարերկրյա անհատական գործուղումները, հիմնականում կազմակերպության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված նախագծերը: Նկատի ունեցեք, որ տրամադրվող ֆինանսավորումը չի կարող օգտագործվել ավելի արագ խմբի ձեռք բերման համար:

6. Հայտի ներկայացման հետ կապված այլ պահանջներ.

Հայտը և կից նյութերը պետք է ներկայացվեն հայտերի ընդունման պորտալում, որը բացվում է կոնկրետ այս փուլի հայտերի ընդունման համար: Հղումը տես՝ Դ.1-ում:

Դրամաշնորհային ֆինանսավորման այս հնարավորության մանրամասների համար այցելեք ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կայք, տես՝ <https://www.usa.am/cms/announcements.php>

Ե. ՀԱՅՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Գնահատման չափանիշներ

Յուրաքանչյուր հայտ դիտարկվում և գնահատվում է ստորև ներկայացվող գնահատման չափանիշների համաձայն:

Նախ՝ գնահատվում է նախագծի համապատասխանությունը Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի նպատակներին, դիտարկվում է, թե նախագիծն ինչքանով է հստակ ձևակերպել խնդիրները, թիրախային խմբերը և ակնկալվող արդյունքները, նաև դիտարկվում է հայտատու կազմակերպության կարողությունն այն իրականացնելու մասով:

Նախագծի գաղափարի որակն ու հիմնավորվածությունը – (25 միավոր). Գաղափարը լավ արծարծված, մշակված է, կան մանրամասներ նախագծային աշխատանքների իրականացման վերաբերյալ: Առաջարկը սահմանում է այդ աշխատանքների իրականացման ողջամիտ ժամկետներ:

Նախագծի պլանավորում/խնդիրներին հասնելու կարողություն – (30 միավոր). Նպատակներն ու խնդիրները հստակ ձևակերպված են և ծրագրային մոտեցումներն ամենայն

հավանականությամբ առավելագույն ազդեցություն կունենան առաջարկվող արդյունքներին հասնելու գործում:

Բյուջե – (10 միավոր). Բյուջեի մանրամասն հիմնավորում է ապահովված: Ծախսերը առաջարկվող աշխատանքների ու ակնկալվող արդյունքների համեմատ ողջամիտ են: Բյուջեն իրատեսական է, հաշվառված են առաջարկվող արդյունքների հասնելու համար անհրաժեշտ բոլոր ծախսերը:

Ակնկալվող արդյունքներ և նախագծի ինքնաբավություն/շարունակելիություն – (20 միավոր). Ծրագրային աշխատանքների դրական ազդեցությունը կպահպանվի նախագծի իրականացումից հետո: Դիմողը ցույց է տալիս, որ կարող է նախագծի հաջողությունը գնահատել կոնկրետ ցուցանիշների ու նշաձողերի միջոցով և ցույց տալ նախագծով նշված նպատակների ուղղությամբ կատարված առաջընթացը: Նախագիծը ներառում է ցուցանիշներ, որով գնահատվում են հետևանքները/ազդեցությունն ու արդյունքները, և նշում է, թե երբ և ինչպես է դա արվելու:

Կազմակերպական կարողություններ և նախկին դրամաշնորհային ծրագրեր – (15 միավոր). Կազմակերպությունն ունի փորձառություն տվյալ ոլորտում և ունի ներքին վերահսկողության մեխանիզմներ, որոնք թույլ կտան տնօրինել դաշնային ֆինանսական միջոցները: Սա ներառում է ֆինանսական կառավարման համակարգը և բանկային հաշվի առկայությունը:

Փակագծերում նշված են յուրաքանչյուր գործոնի համար սահմանված առավելագույն միավորների քանակը, որը տրվում է հայտը դիտարկելիս: Յուրաքանչյուր կետի ներքո առանձնացված են գործոններ, որոնց հիման վրա գնահատվում է ներկայացված առաջարկը: Հայտը դիտարկող անձինք յուրաքանչյուր կետով իրենց գնահատականի հետ միասին ներկայացնում են նաև հիմնավորում ու փաստարկում: Առավել մրցունակ կլինեն այն հայտերը, որոնք լավագույնս կառուցված կլինեն այս գործոնների շուրջ:

2. Դիտարկում և ընտրության գործընթաց

Ստացված յուրաքանչյուր հայտ դիտարկվում է երեք քայլով.

Նվազագույն պահանջների համապատասխանություն. այստեղ մենք սահմանված ժամկետում ստացված բոլոր հայտերի նախնական դիտարկում ենք կատարում՝ առանձնացնելու հայտարարված պահանջներին համապատասխանող և ամբողջական հայտերը: Ոչ-ամբողջական կամ պահանջներին չհամապատասխանող հայտերը դուրս կմնան հետագա դիտարկումից: ԱՄՆ դեսպանությունն իր հայեցողությամբ կարող է նաև դիտարկել փոքր տեխնիկական խնդիրներ ունեցող հայտերը, եթե դրանք հնարավոր է հեշտությամբ շտկել: Նախնական դիտարկումից հետո նվազագույն պահանջներին համապատասխանած հայտերը կանցնեն նախնական փորձագիտական դիտարկման փուլ, որից հետո կլինի վերջնական դիտարկումը Դեսպանատան հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են փորձագիտական դիտարկում կատարած անձինք: Ստորև համառոտ ներկայացվում է, թե ինչ է կատարվում այս երկու փուլերի ընթացքում:

Նախնական փորձագիտական դիտարկման փուլում ԱՄՆ դեսպանության երեք պաշտոնյաներ առանձին-առանձին փորձագիտական տեսանկյունից դիտարկվում են հայտերը և ներկայացնում անկախ գրավոր գնահատական յուրաքանչյուրի վերաբերյալ: Հայտը դիտարկվում է բացառապես հիմնվելով հայտում ներկայացված տեղեկատվության վրա և գնահատվում է ըստ Հայտի քննության մասում ներկայացված չափանիշների: Դիտարկող փորձագետը մինչ հայտը քննության առնելը պետք է հաստատի, որ տվյալ հայտի հետ կապված շահերի բախում չկա: Այսպիսով, ամեն մի փորձագետ տալիս է անկախ գնահատական և միավորներ:

Նախնական փորձագիտական գնահատումից հետո հայտերն համարակալվում են՝ ըստ միավորների (նվազման կարգով): 2019 ֆինանսաբյուջետային տարում տրամադրվելիք ֆինանսավորման ընդհանուր ծավալների հիման վրա հնարավոր է, որ կիրառվի անցողիկ միավոր: Անցողիկ միավորից պակաս հավաքած նախագծերը դիտարկման հաջորդ փուլ չեն անցնի: Մերժված հայտերի վերաբերյալ փորձագետների մեկնաբանությունները հայտատուներին չեն կարող տրամադրվել:

Հանձնաժողովի դիտարկում. Փորձագիտական դիտարկում կատարած անձինք արդեն հանձնաժողովի կազմում մանրակրկիտ քննության կառնեն անցողիկ միավորից բարձր միավոր ունեցող նախագծերը և կներկայացնեն վերջնական առաջարկներ: Այս մանրակրկիտ դիտարկման ժամանակ կքննարկվեն փորձագետի կողմից առաջ քաշած հարցերը, կլինեն որոշակի պարզաբանումներ: Հանձնաժողովականների վերջնական գնահատականները կգումարվեն, ապա կհանվի միջին գնահատական, որոնց հիման վրա կկազմվի նախագծերի վերջնական դասակարգում ըստ գերակա ուղղությունների: Մինչ դրամաշնորհի հատկացումը կպահանջվի վերջնական հաստատում ԱՄՆ պետքարտուղարության համապատասխան վաշինգտոնյան գրասենյակներից:

3. Արդյունքների հայտարարման ու ֆինանսական միջոցների հատկացման նախատեսվող ժամկետը
1 հուլիսի, 2020թ.

2. ԴԱՇՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծանուցում դաշնային ֆինանսավորման տրամադրման մասին

Դրամաշնորհի կամ համագործակցային պայմանագիրը պատրաստվում, ստորագրվում, տրամադրվում և վերահսկվում է Դրամաշնորհային պատասխանատուի կողմից: Լիազորող փաստաթուղթը շահառուի քննությանն ու ստորագրմանն է ուղարկվում էլեկտրոնային փոստով: Շահառուն նախագծով ծախսեր կարող է անել սկսած այն օրվանից, որը նշված է որպես մեկնարկի ամսաթիվ Դրամաշնորհային պատասխանատուի կողմից ստորագրած փաստաթղթում:

Եթե նախագիծը ընտրվում է և ֆինանսավորվում, ԱՄՆ պետքարտուղարությունը որևէ պարտավորություն չի ստանձնում դրա հետագա ֆինանսավորման մասով: Պայմանագրի

վոփոխումը ֆինանսավորման մեծացման կամ իրականացման ժամկետի երկարաձգման նպատակով կատարվում է ԱՄՆ պետքարտուղարության հայեցողությամբ:

Ֆինանսավորման հնարավորության մասին այս հայտարարությունը չի հանդիսանում պարտավորություն ԱՄՆ կառավարության կողմից՝ վճարելու այն ծախսերի դիմաց, որոնք կատարվել են նախագծերի պատրաստման և ներկայացման համար: Ավելին, ԱՄՆ կառավարությունն իրավունք ունի մերժել ստացված բոլոր նախագծերը կամ ցանկացած նախագիծ:

Վճարման եղանակը

Ընդհանուր առմամբ վճարումը կատարվում է երկու մասով. Նախ հատկացվում է գումարի մի մասը, աշխատանքները սկսելու համար, իսկ հետո ներկայացվում է միջանկյալ հաշվետվություն այդ միջոցների տնօրինման վերաբերյալ, որից հետո արտոնվում է մնացած միջոցների տրամադրումը:

1. Վարչական և ազգային քաղաքականության պահանջներ

Պայմաններ և պահանջներ. Մինչ հայտ ներկայացնելը անհրաժեշտ է դիտարկել բոլոր պայմանները, անհրաժեշտ հավաստագրերը, որոնք պահանջվում են այս ֆինանսավորման համար և համոզվել, որ բավարարում եք այդ պայմաններին ու պահանջներին: Դրանք են.

2 CFR 200, 2 CFR 600, հավաստագրումներ և հավաստիացումներ և ԱՄՆ պետքարտուղարության ստանդարտ պայմաններ ու պահանջներ, որոնք բոլորը կարող եք գտնել այս հղմամբ՝ <https://www.statebuy.state.gov/fa/pages/home.aspx>
Նկատի ունեցեք ստանդարտ պայմաններում ու պահանջներում ներառված ԱՄՆ դրոշի հետ կապված բրենդավորման ու ցուցադրման պահանջները:

2. Հաշվետվություններ

Հաշվետվական պահանջներ. Շահառուներից պահանջվում է ներկայացնել ֆինանսական և ծրագրային հաշվետվություններ, որոնց ներկայացման հաճախականությունը սահմանվում է պայմանագրով: Նախագծի ավարտին անհրաժեշտ է ներկայացնել ամփոփիչ հաշվետվություն Դրամաշնորհային պատասխանատուին: Հաշվետվությունը պետք է ներկայացնի կատարված աշխատանքները, ինչքանով էր նախագիծը հաջողված իրենց տեսանկյունից, ինչպես կարելի է հետագայում այն բարելավել: Նախագծի իրականացման ընթացքում նաև պատրաստվում են տեսանյութեր, CD-ներ և այլ տեսանյութեր ու ձայնագրություններ, որոնք ի ցույց են դնում, թե ինչպես են ընդունվել, ինչքանով են պահանջված եղել այդ աշխատանքները: Ներառվում է նաև դրամաշնորհի միջոցների օգտագործման ֆինանսական հաշվառումը/բացվածքը: Այս հաշվետվության տեղեկությունները կօգնեն Ժողովրդավարության հանձնաժողովին հետագայում նախագծերի գնահատման հարցում:

3. Ռիսկի դիտարկում

Երբ հայտերը ներկայացվում են ֆինանսավորման ԱՄՆ դեսպանության Դրամաշնորհների գրասենյակի կողմից կատարվում է վարչական ստուգումներ 2 C.F.R.-ի 200-205 կետերի պահանջների համաձայն: Որակավորումների, ֆինանսական կայունության ու համապատասխանության հետ կապված տեղեկություններից զատ ԱՄՆ դեսպանության կողմից կատարվող ռիսկի գնահատման շրջանակում կարող են դիտարկվել հայտատուի ֆինանսական կայունությունը, հայտատուի կառավարման համակարգերի որակը, նախկին գործունեությունը, նախկին աուդիտորական եզրակացությունները և այլ հարցեր, որոնք առնչվում են ոչ-դաշնային կառույցների կողմից նորմատիվային, կանոնակարգիչ և այլ պահանջների արդյունավետ իրականացմանը: Այս գործոնները քննության առնելուց հետո վերհանված ռիսկերի հիման վրա ԱՄՆ դեսպանության դրամաշնորհների հարցերով պատասխանատուի կողմից կարող են առաջ քաշվել հատուկ պահանջներ՝ ըստ 2 CFR 20.207-ի:

Է. ՈՒՄ ԴԻՄԵԼ ՀԱՐՑԵՐՈՎ

Դիմումի գործընթացի հետ կապված հարցերը կարող եք ուղղել sahakyanl@state.gov հասցեով:

Ը. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղեցույց նախագծի նկարագրական մասի վերաբերյալ

Անչափ կարևոր է, որ ամփոփ նկարագրում հստակ ներկայացված լինի առաջարկվող նախագիծը՝ իր բոլոր էական տարրերով: Մի պարբերությամբ ամփոփ նկարագրեք առաջարկվող նախագիծը: Նախագծից անտեղյակ մարդը դա կարողալով պետք է հասկանա և պատկերացում կազմի նախագծի մասին:

Նախագծի խնդիրները. Պարզ լեզվով թվարկեք ծրագրի խնդիրները դրա իրականացման ողջ շրջանի համար.

Նախագծի մանրամասն նկարագիր

Մանրամասնեք, թե ինչ ձեռքբերումներ կլինեն ձեր նախագծի շրջանակում՝ ըստ հետևյալ վերնագրերի՝ ինչ, ինչու, ով, ինչպես և երբ: Ձեր նախագծի բոլոր ասպեկտները հստակ բացատրեք և անդրադարձ կատարեք ստորև նշվող բոլոր թեմաներին: Հայտը դիտարկողները պետք է կարողանան տեսնել առաջարկվող քայլերի ու ծախսերի կապը: Նախագծի մանրամասն նկարագիրը պետք է հնարավորինս համահունչ լինի Գնահատման չափանիշներ բաժնում (տես՝ վերևում) առանձնացված չափանիշների հետ:

Ինքնաբավություն/շարունակելիություն. Պարզաբանեք, թե ինչպես այս ֆինանսավորմամբ դուք կձևավորեք ինքնաբավ/շարունակելի նախագիծ, որն այս ֆինանսավորման սպառումից հետո

կշարունակի գործել: Նշեք ֆինանսավորման այլ աղբյուրները, որոնց ներկայացրել եք կամ մտադիր եք ներկայացնել հայտեր և ինչ կարգավիճակում են գտնվում այդ հայտերը:

Հետևանքային արդյունքներ. Համոզվեք, որ նախագծում նկարագրված են հետևանքային արդյունքները, ոչ սոսկ արդյունքները: Օրինակ՝ հաջողված նախագիծը չի գնահատվում ըստ այն անձանց թվի, ովքեր մասնակցել են ուսուցումների, այլ ըստ նրա, թե ի շահ համայնքի ու հասարակության ինչ կարող են անել շահառուները իրենց ձեռք բերած նոր գիտելիքներով:

Կազմակերպական կառուցվածք և անձնակազմ. Նկարագրեք, թե ինչպես են կազմակերպվելու և տնօրինվելու նախագծի աշխատանքները: Ի ցույց դրեք փորձն ու իմացությունը, որի հիման վրա իրականացնելու եք հայտում ներկայացված նախագիծը: Եթե այս նախագծի շրջանակում գործակցում եք այլ կազմակերպությունների հետ, ապա նկարագրեք այդ գործակցությունը:

Ուղեցույց բյուջեի հիմնավորման վերաբերյալ

Բյուջեի մանրամասն բացատրագիր. Բացատրագրում պետք է մանրամասնորեն ներկայացվի, թե ինչու է անհրաժեշտ այդ ֆինանսավորումը: Ապահովեք մանրամասն աղյուսակ՝ բացատրագրով, որտեղ առանձին ներկայացված են հայտով պահանջվող ֆինանսավորման և այլ աղբյուրի ֆինանսավորումը (եթե համաֆինանսավորում կա)՝ ըստ ծախսային տողերի կամ միջոցառումների (անձնակազմ, աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ, գործուղումներ, սարքավորումներ, անհրաժեշտ նյութեր և պարագաներ, պայմանագրեր, անուղղակի ծախսեր): Բյուջեի մանրամասն բացատրագիրը, որ ներկայացվում է հայտի հետ, պետք է դուրսբերվի արժեքով և տողերով ՆՈՒՅՆԱԿԱՆ լինի SF-424 և SF-424A ձևերի հետ: Գումարները կյորացրեք մինչև դոլար, ցենտեր մի նշեք: Խորհուրդ ենք տալիս նախ պատրաստել բյուջեի մանրամասն բացատրագիրն ու աղյուսակը, ապա ըստ տողերի տվյալները ներմուծել SF-424A-ի մեջ և հետո ավարտին հասցնել SF-424-ի 18a-g կետերը:

Եթե նախագիծը ավարտին հասցնելու համար նախատեսվում են այլ ծախսեր, որոնք հայտով պահանջվող ֆինանսավորմամբ չեն ծածկվելու, ապա նշեք ֆինանսավորման մնացած բոլոր աղբյուրները, որոնց արդեն դիմել եք, կամ պատրաստվում եք դիմել և նշեք, թե ինչ կարգավիճակում են գտնվում այդ աշխատանքները: Եթե ֆինանսավորման համար չեք դիմելու այլ աղբյուրների, ապա պարզաբանեք:

Անձնակազմ և աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ. Նկարագրել աշխատավարձերը և աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները ժամանակավոր և հիմնական աշխատակազմի համար, ովքեր նախագծի շրջանակում ներգրավված են լինելու և նշել, թե իրենց ժամանակի որ մասն են ծախսելու նախագծի իրականացման վրա:

Գործուղումներ. Ներկայացնել գործուղման ու օրապահիկի ծախսերը, որ կպահանջվեն նախագծի համար՝ վերջինիս ծրագրային աշխատողների, խորհրդատուների, բանախոսների և մասնակիցների/շահառուների համար: Եթե նախատեսվում է միջազգային գործուղում, ապա ներկայացրեք կարճ հիմնավորում դրա վերաբերյալ:

Սարքավորումներ. Նկարագրել այս նախագծի համար պահանջվող այն տեխնիկան, կահույքը կամ այլ անձնական գույքը, որի շահագործման ժամկետը մեկ տարուց ավել է (պիտանի է շահագործման համար նաև նախագծի ավարտից հետո) և որի մեկ միավորի արժեքը առնվազն 5.000 ԱՄՆ դոլար է:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ. Նկարագրել ու թվարկել նախագծի համար պահանջվող բոլոր պարագաներն ու նյութերը, այդ թվում՝ համակարգիչները: Եթե որևէ առարկայի արժեքը գերազանցում է 5.000 ԱՄՆ դոլարը, ապա դա ներառեք բյուջեի սարքավորումներ բաժնում:

Այլ ուղղակի ծախսեր. Նկարագրել նախագծի իրականացման հետ կապված այլ ուղղակի ծախսերը, որոնք վերոհիշյալ որևէ կատեգորիայի մեջ չեն մտնում: Օրինակ՝ նյութերի կամ սարքավորումների բեռնափոխադրման ծախսեր, հաշվարկված հարկեր և այլն: «Այլ ծախսերի» մասով պետք է լինի մանրամասն բացվածք և բացատրություն ծախսային առանձին տողերով:

Անուղղակի ծախսեր. Այս ծախսերն ուղղակիորեն կապված չեն նախագծի աշխատանքների հետ, օրինակ՝ վերադիր ծախսերը, որոնք անհրաժեշտ են կազմակերպության ընթացիկ գործունեության համար: Եթե ձեր կազմակերպությունն ունի NICRA և բյուջեում NICRA գանձումները ներառված են, ապա խնդրում ենք կցել NICRA-ի օրինակը: Կազմակերպությունները, որոնք չեն ունեցել NICRA կարող են ուղղակի ծախսերի 10 տոկոսի չափով անուղղակի ծախսեր հայտագրել ըստ 2 CFR 200.68-ի:

«Համաֆինանսավորումը» վերաբերում է ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորումից զատ նախագծում կազմակերպության կամ այլ կառույցների ունեցած ներդրմանը: Սա նաև ներառում է բնաիրային մասնակցությունը, ինչպիսիք են օրինակ՝ կամավորների ժամանակը կամ հատկացվող տարածքները: